

04.10.2024

Ծանուցում <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերության սպառողներ (դիմող անձիք) ԻՉԱԲԵԼԼԱ ՅՈՒՐԻԻ ՕԳԱՆԵՉՈՎԱ ին (միացման պատվեր՝ 107462111 , № 0586901 պայմանագիր)

Հայտատու՝ <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.12.2019 թվականի թիվ 523-Ն որոշմամբ հաստատված կանոնների 8-րդ կետ

Հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված՝ ք. Երևան, Շևչենկոյի փող. 6/5 հասցեում գտնվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման Դիմումին կից ներկայացվել է թիվ 14092023-01-0312 վկայականը: Վկայականում ք. Երևան, Շևչենկոյի փող. 6/5 հասցեի սպառման համակարգի տեղակայման տարածքը ներկայացված է որպես բնակելի տուն:

Ձեզ հետ 07.02.2024 թվականին կնքված սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից իրականացվել են միացման շինարարական աշխատանքներ:

Աշխատանքների իրականացման ընթացքում արձանագրվել է, որ հիշյալ հասցեում գտնվող սպառման տարածքը ոչ թե բնակելի տուն է, այլ իրենից ներկայացնում է որպես բազմաբնակարանային շինություն:

Ըստ էության, Ձեր կողմից ներկայացված սեփականության վկայականը չի համապատասխանում Ձեր կողմից ներկայացված Դիմումում նշված սպառման տարածքի փաստական կարգավիճակին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով բաշխման ցանցային կանոններով՝ Ձեզ հետ կնքված պայմանագիրը ենթակա է լուծման, իսկ Ձեր կողմից վճարված միացման վճարի կանխավճարը՝ վերադարձման:

Ընկերությունը առաջարկում է Ձեզ տրամադրել բանկային հաշվեհամար՝ N 0586901 /միացման պատվեր 107462111/ պայմանագրի շրջանակներում Ձեր կողմից կատարված վճարումը վերադարձնելու նպատակով:

Ձեր անվամբ գործող բանկային հաշվեհամարի բացակայության պարագայում անհրաժեշտ է Ընկերությանը հետադարձ գրությամբ ներկայացնել համաձայնությունն առ այն, որ Ընկերությունը վերադարձման ենթակա գումարը իրավասու է փոխանցել «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գործող 247002214564000 տարանցիկ հաշվեհամարին և Դուք անձնագրի ներկայացման միջոցով կարող եք ստանալ կատարված կանխավճարը:

Հասցե՝ ք. Երևան, Նորք Մարաշ, Ա. Արմենակյան 127

Հեռ.՝ +374-10-650086

Վեբ կայք՝ <https://www.ena.am/>

Էլ. փոստ՝ office@ena.am